զի սակաւ մի երգեսցեն. եւ իբրեւ բացին սե-
նեակն եւ թողին զջուրն որ տօլամնին լցման,
ապա սկսան երգել օրէն երաժշտի առանց մա-
տից. ուստի ձայն քաղցր եւ համեղ ելանէր
առանց աշխատանաց մարդոյ. եւ զինչ էգկին 110
եւ յեղանակ ուղէր մարդն, նա զայն երգէին:
Եւ մեք զայն ամենայն տեսեալ փառս տալաք
իմաստութիւն տուողին Աստուծոյ, զի այս-
պիսի միտք եւ խելք տվել է որդոց մարդկան.
եւ ասա էառ լրումն տէրունական բանն թէ 115
Իմաստնադոյնք են որդիք աշխարհիս քան
զորդիս լուսոյ յազգս իւրեանց:

Եւ մեք մինչ ի հիացման էաք եւ զչուցեալ
հայէաք, ել ջուր ի կանգնած տեղաց մերոց.
եւ որպէս անձրեւ հոսէր ի վերայ մեր, որ հա- 120
զիւ փախաք ի ջրոյն: Եւ առաջ գնացեալ տե-
սաք ծառ մի որ զինչ թռչուն ուզես կայր ի
նմա եւ ինչ զազանք եւ անասունք ի վերայ
երկրի են՝ կազմած են ի ճուղսն, չունք, ա-
ռիւծք, ձիք, ուղտք, սիրամարգք, աղլօղք, 125
աղաւնիք, սագք, բաթեր, կառք լծեալ ձիովք
եւ այլ բազմադիմի կերպարանք. եւ ամէնից
բերանոյ ջուր բխէր ի սքանչումն տեսողաց:
Եւ այնպէս սահմանած էր, որ ծառն ի վեր
ջուր ելանէր. եւ մարդոյն վրայ թափէր: Եւ 130
այլ բազում բանս եւ զանազան իրս տեսաք,
զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ գրել կամ ծա-
նուցանել ձեզ. քանզի տեսաք ծառս անլուր
եւ անտես պտուղս. իսկ թուրինճ եւ նարինճն

117 ազգս: — 133 անլուռ: